
ԱՆՁԻ ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ ԿԱԶՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԻՆՈՍՅԱՆ Ս. Ա.

Միջազգային իրավական տեքստերում տրվող ամուսնության իրավական հասկացություններից կարևորում ենք երկուսը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (այսուհետև՝ Կոնվենցիա) և Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (այսուհետև՝ Հռչակագիր)։ Այս փաստաթղթերը ստեղծվել են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները ճանաչելու և պաշտպանելու նպատակով և այդ նպատակին հասնելու համար նախատեսում են համապատասխան պաշտպանության մեխանիզմներ։ Օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետև՝ Դատարան) մեկնաբանում է Կոնվենցիայում տեղ գտած նորմերը և արձանագրում դրանց խախտումները։

Հռչակագրի 16-րդ հոդվածն ամրագրում է. «1. Չափահաս դարձած տղամարդիկ ու կանայք իրավունք ունեն, առանց ռասայական, ազգային ու կրոնական պատկանելության հատկանիշների որևէ սահմանափակման, ամուսնանալու և ընտանիք կազմելու։ Նրանք օգտվում են նույն իրավունքներից ամուսնանալու պահին, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում։

2. Ամուսնությունը կարող է կայանալ միայն ամուսնացող երկու կողմերի ազատ ու լիակատար համաձայնության դեպքում։

3. Ընտանիքը հանդիսանում է հասարակության բնական ու հիմնական բջիջը և ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանության իրավունք»¹։

Կոնվենցիայի 12-րդ հոդվածը՝ «Ամուսնության իրավունք»-ը, ամրագրում է. «Ամուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կանայք ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան»²։

Չնայած Հռչակագիրը իր ընդունման պահից ի վեր ամրագրում էր ամուսինների իրավահավասարության սկզբունքը 16-րդ հոդվածում, Կոնվենցիան լռում էր դրա մասին։ Բացի այդ, որոշ իրավագետներ ոչ միայն չէին անդրադառնում տղամարդու և կնոջ ամուսնական իրավահավասարության գաղափարին, այլև նույնիսկ բացահայտ

¹ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948 թ. դեկտեմբերի 10), հոդվ. 16, <http://www.un.org/fr/universal-declaration-human-rights/index.html>

² Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (1950 թ. նոյեմբերի 4, ուժի մեջ է մտել 1953 թ. սեպտեմբերի 3-ին), հոդվ. 12, Ամուսնության իրավունք, http://www.echr.coe.int/Documents/Convention_FRA.pdf

անտեսում էին այն: Այսպես, XX դարի ֆրանսիացի հայտնի իրավագետ Լեոն Շյուլիո դը լա Մորանդյերը ամուսնությունը բնորոշում էր հետևյալ կերպ. «Ֆրանսիական իրավունքում ամուսնությունը օրենքի դրույթներին համապատասխան կնքված քաղաքացիական պայմանագիր է, որ միավորում է կնոջը և տղամարդուն՝ համատեղ կյանքի և փոխօգնության նպատակով՝ ամուսնու՝ ընտանիքի գլխի ղեկավարությամբ»³: Ի վերջո, այս սկզբունքը առաջին անգամ տեղ գտավ Կոնվենցիային կից՝ 1984 թ. ընդունված 7-րդ արձանագրության մեջ, որտեղ առաջին անգամ ամրագրվեց, որ ամուսինները ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծվելիս օգտվում են հավասար իրավունքներից:

Ազատագրված անձանց ամուսնության իրավունքը նույնպես նախատեսված չէ Կոնվենցիայով, սակայն անդամ բազմաթիվ պետությունների ներպետական օրենսդրությունները թույլ են տալիս ազատագրվածներին օգտվել ամուսնության իրավունքից: Օրինակ, Ֆրանսիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը նշում է, որ ազատագրվածները կարող են ամուսնանալ հանրապետության դատախազի թույլտվությունը ստանալուց հետո⁴: Հայաստանի Հանրապետությունը նույնպես ճանաչում է ազատագրվածների ամուսնության իրավունքը⁵: Լեհաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը, սակայն, ավելի զգուշորեն է մոտենում այս հարցին և ազատագրվածներին չի օժտում ամուսնության իրավունքով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր սկզբունքային որոշումներում նշում է, որ չնայած ազատագրվածները չեն կարող ունենալ կանոնավոր ամուսնական հարաբերություններ, նրանց ամուսնության հիմնարար իրավունքը ամեն դեպքում պետք է պահպանվի: Դատարանը այս հարցին անդրադառնում է իր մի շարք որոշումներում, որոնցից առավել կարևոր է **Հրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության 2005 թ. հոկտեմբերի 6-ի** որոշումը⁶: Այս որոշման մեջ Դատարանն արձանագրում է, որ ազատագրվածները ամեն դեպքում շարունակում են օգտվել իրենց բոլոր հիմնարար իրավունքներից և ազատություններից, բացի ազատ տեղաշարժվելու իրավունքից, նույնիսկ ազատությունից զրկված լինելու պարագայում: Իրավունքների և ազատությունների յուրաքանչյուր սահմանափակում պետք է պատճառաբանվի իշխանությունների կողմից: Այս որոշման վրա հիմնվելով՝ Դատարանը իր մյուս՝ **Ժարեմովիչն ընդդեմ Լեհաստանի 2010 թ. հունվարի 5-ի**⁷ գործում նշում է. «Անձնական ազատությունը դեռևս ամուսնության իրավունքից օգտվելու նախապայման չէ»: Սա նշանակում է, որ նույնիսկ,

³ Л. Жюллио де ла Морандьер. Гражданское право Франции, М., 1958, с. 322.

⁴ Տե՛ս Ֆրանսիայի Հանրապետության Քրեական դատավարության օրենսգիրք, հոդվ. D424, www.legifrance.fr

⁵ Տե՛ս «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 27, մաս 6, www.arlis.am

⁶ Տե՛ս CASE of HIRST v. THE UNITED KINGDOM (No. 2)- 74025/01 [2005] ECHR 681 (6 October 2005), <http://www.bailii.org/eu/cases/ECHR/2005/681.html>

⁷ Տե՛ս CASE of JAREMOWICZ v. POLAND- 24023/03 (5 January 2010), [http://hudoc.echr.coe.int/fre#{"itemid":\["001-96455"\]}](http://hudoc.echr.coe.int/fre#{)

էթէ անձը անազատության մէջ է, նա կարող է օգտվել ամուսնության իր հիմնարար իրավունքից: Այսպիսով, պարզ է դառնում, որ Դատարանը, լայն մեկնաբանելով Կոնվենցիան, թույլ է տալիս ազատագրկվածներին ամուսնանալ՝ նշելով, որ ամուսնության իրավունքը յուրաքանչյուր մարդու հիմնարար իրավունքն է, մինչդեռ Կոնվենցիայի 12-րդ հոդվածը տառացիորեն ոչ մի դրույթ չի պարունակում ազատագրկվածների ամուսնության իրավունքի մասին:

Ամուսնալուծությունը (լատիներեն *divortium*) ամուսինների միջև գոյություն ունեցող իրավաբանական կապի խզումն է: Այստեղ կարևոր է, թե արդյոք Կոնվենցիայի 12-րդ հոդվածում տեղ գտած ամուսնության իրավունքը ինքնաբերաբար նաև նախատեսու՞մ է ամուսնալուծության իրավունք: Այլ կերպ՝ հնարավո՞ր է 12-րդ հոդվածից բխեցնել նաև ամուսնալուծության իրավունքը: Նման խնդիրներ առաջանում են հիմնականում Կոնվենցիայի անդամ համեմատաբար ավելի պահպանողական և կրոնական այն պետություններում, որտեղ ներպետական օրենսդրությամբ ամուսնալուծության իրավունք նախատեսված չէ: Դատարանն ամուսնալուծության իրավունքի հարցը քննարկում է **Ջոնսթոնը և ուրիշներն ընդդէմ Իռլանդիայի 1986 թ. դեկտեմբերի 18-ի** գործում⁸: Այստեղ դիմողները բողոքում էին այդ ժամանակ Իռլանդիայում գոյություն ունեցող իրավիճակից. իռլանդական ազգային օրենսդրությունը արգելում էր ամուսնալուծությունը: Մարդիկ չէին կարող կրկին ամուսնանալ այնքան ժամանակ, քանի դեռ նրանց ամուսինները կենդանի էին, այսինքն՝ նրանք կարող էին օգտվել իրենց ամուսնության իրավունքից միայն ամուսնու մահից հետո: Դատարանն իր հերթին պարզաբանում է, որ այստեղ չկա Կոնվենցիայի 12-րդ հոդվածի խախտում, քանի որ պետությունը չունի պոզիտիվ պարտականություն ստեղծելու այնպիսի հնարավորություններ, որոնք թույլ կտան երկրորդ անգամ ամուսնանալ ցանկացողներին օգտվել իրենց ամուսնության իրավունքից: Պետությունը չի երաշխավորում անձանց երկրորդ անգամ ամուսնանալու իրավունքը: Սակայն պետությունն ունի նեգատիվ պարտականություն առ այն, որ պետք է ամեն դեպքում զերծ մնա էապես ամուսնության իրավունքի էությունը վնասող պայմաններ ամրագրելուց: Վերլուծելով Դատարանի վերոնշյալ որոշումները՝ կարող ենք փաստել, որ Կոնվենցիայի 12-րդ հոդվածը նախատեսում է անձանց ամուսնության և ոչ թե այն լուծելու իրավունքը: Սակայն Կոնվենցիան ընդունվել է մոտ 70 տարի առաջ, իսկ այժմ անհրաժեշտություն է առաջանում այն մեկնաբանել արդիական իմաստով՝ հաշվի առնելով արդի բարքերը, մարդկանց մտածելակերպը, հասարակության զարգացածության մակարդակը: Իհարկե, պետություններն ունեն լայն հայեցողության հնարավորություն այս հարցում, սակայն պետք է անձանց առանձին ապրելու հնարավորություն ընձեռեն, որովհետև նրանք չեն կարող

⁸ *Sté u AFFAIRE JOHNSTON ET AUTRES c. IRLANDE*, Requête no 9697/82 (18 décembre 1986), [http://hudoc.echr.coe.int/eng#{\"respondent\":\[\"IRL\"\],\"kpthesaurus\":\[\"240\"\],\"documentcollectionid2\":\[\"GRANDCHAMBER\",\"CHAMBER\"\],\"itemid\":\[\"001-62066\"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{\)

մարդկանց ստիպել միասին ապրել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաճախ ամուսնությունները կարող են ձախողվել:

Կոնվենցիայի 12-րդ հոդվածը նախատեսում էր ամուսնության ավանդական հայեցակարգը, սակայն հասարակության զարգացման հետ մեկտեղ առաջ են գալիս խնդիրներ՝ կապված միասեռականների և տրանսսեռականների ամուսնության իրավունքի հետ: Երկու հնարավոր հարց է առաջանում.

1) Կոնվենցիայի 12-րդ և Հռչակագրի 16-րդ հոդվածներով նախատեսված ամուսնության իրավունքը ներառո՞ւմ է արդյոք տրանսսեռականների ամուսնությունը:

2) Կոնվենցիայի 12-րդ և Հռչակագրի 16-րդ հոդվածներով նախատեսված ամուսնության իրավունքը ներառո՞ւմ է արդյոք միասեռականների ամուսնության իրավունքը:

Տրանսսեռական է համարվում այն անձը, ըստ որի, իր ֆիզիոլոգիական մարմինը և կենսաբանական սեռը միմյանց չեն համապատասխանում⁹: Դատարանը **Քրիստին Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության 2002 թ. հուլիսի 11-ի** իր որոշման մեջ միմյանցից առանձնացնում է ամուսնության և ընտանիք կազմելու իրավունքները¹⁰: Այս գործով դիմումատուն վիճարկում էր անգլիական իշխանությունների կայացրած որոշման համապատասխանությունը Կոնվենցիայի 12-րդ հոդվածին: Անգլիական իշխանությունները մերժել էին տրանսսեռականի ամուսնության դիմումը այն պատճառաբանությամբ, որ դիմումատուն փոխել է իր սեռը և ֆիզիկապես չի կարող ունենալ երեխաներ, հետևաբար չի կարող կազմել ընտանիք: Դատարանը, արձանագրելով Կոնվենցիայի 12-րդ հոդվածի խախտում, նշում է, որ պետք չէ կապել ամուսնության իրավունքն ընտանիք կազմելու իրավունքի հետ, քանի որ բնական պատճառներով տրանսսեռականները չեն կարող ունենալ երեխա, հետևաբար և չեն կարող կազմել ընտանիք, սակայն այս հանգամանքը ոչ մի կերպ չպետք է սահմանափակի վերջիններիս ամուսնության իրավունքը: Մեկ այլ՝ **Դ. Վան Օստերվիլքն ընդդեմ Բելգիայի 1980 թ. նոյեմբերի 6-ի** գործով Դատարանը կրկին առանձնացնում է այս երկու իրավունքները¹¹: Դիմումատուն վիճարկում էր Բելգիայի իշխանությունների այն որոշումը, որով վերջիններս մերժել էին դիմումատուի փոփոխված սեռի մասին տեղեկություններն ընդգրկել ծննդի պետական գրանցման գրքում, որը, ըստ նրա, խոչընդոտ էր ամուսնության իրավունքն իրականացնելու: Նրանք իրենց որոշումը պատճառաբանում էին այն հանգամանքով, որ դիմումատուն այլևս չի կարող ծնունդ տալ և գրկված է վերարտադրողական գործառնություններից: Դատարանը, արձանագրելով Կոնվենցիայի 12-րդ հոդվածի խախտում, իր հերթին նշում է, որ վերարտադրողականության հատկությունը երբեք էլ չի եղել ամուսնության կնքման ամենագլխավոր պայմանը և նպատակը: Հետևաբար, այն չպետք է արգելք հանդիսանա անձանց՝ իրենց ամուսնության

⁹ Տրանսսեքսուալ բառի նշանակությունը, www.larousse.fr

¹⁰ Stéu AFFAIRE CHRISTINE GOODWIN c. ROYAUME-UNI, Requête no 28957/95 (11 juillet 2002), [http://hudoc.echr.coe.int/eng-press/?i=001-65153#{"itemid":\["001-65153"\]}](http://hudoc.echr.coe.int/eng-press/?i=001-65153#{)

¹¹ Stéu AFFAIRE VAN OOSTERWIJCK c. BELGIQUE, Requête no 7654/76 (6 novembre 1980), <http://hudoc.echr.coe.int/app/conversion/pdf/?library=ECHR&id=001-62107&filename=001-62107.pdf&TID=ihgdqbxnf>

հիմնարար իրավունքից օգտվելու համար: Բացի այդ, Կոնվենցիայի անդամ պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն անձանց սեռերի փոփոխության փաստը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմիններում իրավաբանորեն ճանաչելու ուղղությամբ:

Իր երկու այլ **Բիսն ընդդեմ Միացյալ Թագավորության 1986 թ. հոկտեմբերի 17-ի և Քոսսին ընդդեմ Միացյալ Թագավորության 1990 թ. սեպտեմբերի 27-ի** դատական որոշումներում Դատարանը, սակայն, բրիտանական իշխանությունների կողմից սեռերի փոփոխության փաստը չճանաչելը չի համարում Կոնվենցիայի 12-րդ հոդվածի խախտում՝ ընդգծելով, որ վերոնշյալ հոդվածը ճանաչում է միայն կենսաբանական տարբեր սեռերի մարդկանց՝ տղամարդու և կնոջ ամուսնության իրավունքը¹²: Դատարանը, սերտորեն կապելով **ընտանիք** և **ամուսնություն** հասկացությունները, այս որոշումներում պաշտպանում է ամուսնության ավանդական հայեցակարգը, նշելով, որ ամուսնությունը յուրաքանչյուր ընտանիքի հիմքն է: Ամեն դեպքում պետք է նշել, որ **Քոսսին ընդդեմ Միացյալ Թագավորության** գործով դատարանը որոշում է կայացրել ձայների մեծամասնությամբ, այնինչ դատավորների փոքրամասնությունը, հղում կատարելով **Դ. Վան Օստերվիլքն ընդդեմ Բելգիայի** գործին, գտնում էր, որ ամեն դեպքում կենսաբանական սեռը չպետք է կապել անձանց վերարտադրվելու հատկության հետ, քանի որ տղամարդիկ և կանայք, որոնք վերարտադրողական խնդիրների պատճառով ունակ չեն երեխա ունենալ, ամեն դեպքում կարող են օգտվել իրենց ամուսնության իրավունքից: Հետևաբար, ոչ մի պատճառ չկա դիմումատուների սեռի ճանաչման փաստը մերժելու՝ դրանով իսկ սահմանափակելով նրանց ամուսնության իրավունքը՝ հիմք ընդունելով միայն այն փաստը, որ չեն կարող երեխա ունենալ: Այսպիսով, չնայած Դատարանի՝ երբեմն իրար հակասող որոշումների առկայության, դատական պրակտիկան այսօր այնքան է զարգացել, որ սեռի փոփոխությունը այլևս ամուսնություն կնքելու խոչընդոտ չէ, և տրանսսեռականները կարող են օգտվել Կոնվենցիայով երաշխավորված իրավունքից:

Համասեռամոլությունը նույն սեռի անձանց միմյանց համակրելու հանգամանքն է¹³: Հասարակական բարքերի փոփոխման հետ մեկտեղ նույն սեռի անձինք նույնպես ցանկացան օգտվել իրենց ամուսնության իրավունքից: Մակայն կային դրան խոչընդոտող բազմաթիվ հանգամանքներ: Դրանցից առավել կարևոր են երկուսը.

1) ազգային մակարդակով. ներպետական օրենսդրությունը թույլ չի տալիս կամ առհասարակ չի նախատեսում այդպիսի անձանց ամուսնության հնարավորություն.

¹² *Sté u AFFAIRE REES c. ROYAUME-UNI*, Requête no 9532/81 (10 octobre 1986), [http://hudoc.echr.coe.int/eng# {"respondent":\["GBR"\],"article":\["12"\],"kpthesaurus":\["240"\],"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\],"itemid":\["001-62121"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{); *AFFAIRE COSSEY c. ROYAUME-UNI*, Requête no 10843/84 (27 septembre 1990), [http://hudoc.echr.coe.int/eng# {"respondent":\["GBR"\],"article":\["12"\],"kpthesaurus":\["240"\],"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\],"itemid":\["001-62198"\]}](http://hudoc.echr.coe.int/eng# {)

¹³ Համասեռամոլության սահմանումը, www.larousse.fr

2) միջազգային մակարդակով. միջազգային իրավական տեքստերը չեն նախատեսում այդպիսի ամուսնության հնարավորություն:

Առաջինի դեպքում հասարակության զարգացման հետ մեկտեղ Կոնվենցիայի անդամ որոշ պետություններ աստիճանաբար ընդունել են նոր օրենքներ կամ կատարել արդեն գոյություն ունեցող նորմատիվ իրավական ակտերում այնպիսի փոփոխություններ, որոնք ներկայումս հնարավոր են դարձնում միասեռականների ամուսնությունը: Այսօր Եվրախորհրդի անդամ 11 պետություններ օրինականացրել են միասեռական զույգերի ամուսնությունները¹⁴: Այդ պետությունների թվում առաջինների շարքում էր Ֆրանսիայի Հանրապետությունը, որը 2013 թ. մայիսի 17-ին ընդունել էր միասեռականների ամուսնությունը օրինականացնող օրենք¹⁵: Դրանով նախատեսվում էր փոփոխություններ կատարել Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 143-րդ հոդվածում. «Ամուսնությունը կարող է կնքվել երկու տարբեր կամ **նույն սեռի** (ընդգծումը մերն է-Գ.Ս.) ներկայացուցիչների միջև»¹⁶: Այս նոր օրենքները, որոնք թույլ են տալիս միասեռականների ամուսնությունը, լուծում են այս խնդիրը միայն ներպետական մակարդակով, սակայն հարց է ծագում՝ դրանց իրավական դրույթները արդյո՞ք համապատասխանում են միջազգային իրավունքի նորմերին:

Եթե ընդունում ենք, որ ամուսնության իրավունքը անմիջականորեն ընտանիք կազմելու իրավունքի հիմքն է, և ամուսնական իրավահարաբերությունների սուբյեկտ կարող են լինել միայն կինը և տղամարդը, ապա իրավամբ կարելի է ասել, որ Կոնվենցիայի անդամ պետությունների ընդունած՝ միասեռականների ամուսնություններն օրինականացնող օրենքները հակասում են միջազգային իրավունքի նորմերին, մասնավորապես հենց Կոնվենցիայի 12-րդ և Հռչակագրի 16-րդ հոդվածներին: Դատարանը, սակայն, փոքր-ինչ այլ կերպ է մեկնաբանում 12-րդ հոդվածը՝ բնավ չդատապարտելով միասեռականների ամուսնությունը և փաստացիորեն նրանց թույլ է տալիս օգտվել ամուսնության իրավունքից որոշ պայմանների առկայության պարագայում: Միասեռականների ամուսնության իրավունքին Դատարանն անդրադառնում է իր մի շարք որոշումներում, որոնցից առավել կարևոր են երեքը. Միայքը և Կուպֆն ընդդեմ Ավստրիայի 2010 թ. հունիսի 23-ի գործը¹⁷, Փարին ընդդեմ Միացյալ Թագավորության

¹⁴ St' u Le mariage homosexuel en Europe, <http://www.touteleurope.eu/actualite/le-mariage-homosexuel-en-europe.html>

¹⁵ St' u LOI n° 2013-404 du 17 mai 2013 ouvrant le mariage aux couples de personnes de même sexe, www.legifrance.fr

¹⁶ St' u Code Civil de la République de France, Article 143, www.legifrance.fr

¹⁷ St' u AFFAIRE SCHALK ET KOPF c. AUTRISHE, Requête no 30141/04 (23 juin 2010), [http://hudoc.echr.coe.int/eng#-{"respondent":\["AUT"\],"kphthesaurus":\["240"\],"document-collectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\],"itemid":\["001-99643"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#-{)

2006 թ. նոյեմբերի 28-ի գործը¹⁸ և Օլիարին և ուրիշներն ընդդեմ Իտալիայի 2015 թ. հուլիսի 21-ի գործը¹⁹:

Փարին ընդդեմ Միացյալ Թագավորության գործում դիմողներն էին մի կին և վիրահատության շնորհիվ տղամարդուց կին դարձած ամուսինը, որը բողոքում էր, որ իշխանությունների կողմից իր սեռի փոփոխության փաստի իրավաբանական ճանաչման դեպքում ինքը պետք է հրաժարվեր իր ամուսնությունից, որը, ըստ նրա, խախտում էր Կոնվենցիայով երաշխավորված ամուսնության իր իրավունքը: Դատարանն այս գործով չարձանագրեց 12-րդ հոդվածի խախտում՝ պաշտպանելով ամուսնության ավանդական հայեցակարգը, և նշեց՝ ներպետական օրենսդրությունը թույլատրում է միայն հակառակ սեռի ներկայացուցիչների միջև ամուսնությունը: Այս գործով Դատարանի մեկնաբանությունն ամբողջովին տեղավորվում էր Կոնվենցիայի 12-րդ հոդվածի շրջանակում: Միայքը և Կոպֆն ընդդեմ Ավստրիայի գործով Դատարանն արդեն որոշ չափով փոխում է իր մոտեցումը միասեռականների ամուսնության իրավունքի վերաբերյալ: Թեև նշում է, որ Կոնվենցիայի 12-րդ հոդվածի խախտում չկա, այնուամենայնիվ, քննարկում է վերոնշյալ հոդվածում տեղ գտած նորմի՝ նույնասեռ անձանց մասով կիրառման հնարավորությունը. հնարավոր է ամուսնության իրավունքին նվիրված հոդվածի ձևակերպումը որոշ դեպքերում մեկնաբանել այնպես, որ նույնասեռ անձինք նույնպես կարողանան օգտվել ամուսնության իրավունքից: Դատարանն արձանագրում է. «...Դատարանը այլևս հաշվի չի առնելու, որ 12-րդ հոդվածով սահմանված ամուսնության իրավունքը բոլոր դեպքերում սահմանափակվի միայն հակառակ սեռի ներկայացուցիչների միջև ամուսնությամբ...»:

Օլիարին և ուրիշներն ընդդեմ Իտալիայի գործով Դատարանը կատարում է Կոնվենցիայի անդամ-պետությունների ներպետական օրենսդրությունների համեմատական վերլուծություն և նշում, որ ընդամենը Եվրախորհրդի անդամ 11 պետություն է օրենսդրորեն թույլ տվել միասեռականների ամուսնությունը, որը վկայում է այն մասին, որ այս հարցի շուրջ չկա որևէ կոնսենսուս: Հետևաբար, Դատարանն ընդգծում է, որ իրավունք չունի դատապարտելու որևէ անդամ-պետության և նրան պարտավորեցնել ընդունել նույնասեռ անձանց ամուսնությունը թույլատրող օրենքներ:

Այս երեք գործերը վերլուծելիս ուշադրություն դարձնենք մի կարևոր հանգամանքի վրա, այն է՝ երեք գործերում էլ Դատարանը միանշանակ նշում է, որ Կոնվենցիայի անդամ-պետություններն ունեն լայն հնարավորություն նույնասեռ անձանց ամուսնությունները թույլատրելու կամ չթույլատրելու հարցում և կարող են այն կարգավորել իրենց ներպետական օրենսդրությամբ: Սա վկայում է, որ պետությունները չունեն նույնասեռ անձանց ամուսնության իրավունքի իրացման հնարավորություններ ստեղծե-

¹⁸ Stéu CASE OF PARRY v. THE UNITED KINGDOM, Application no. 42971/05 (28 November 2006), [http://hudoc.echr.coe.int/eng#{\"dmdocnumber\":\"812256\"}, \"itemid\":\"001-78666\"}\]](http://hudoc.echr.coe.int/eng#{\)

¹⁹ Stéu CASE OF OLIARI AND OTHERS v. ITALY, Applications nos. 18766/11 and 36030/11 (21 July 2015), [http://hudoc.echr.coe.int/eng#{\"itemid\":\"001-156265\"}\]](http://hudoc.echr.coe.int/eng#{\)

լու պոզիտիվ պարտականություն: Հաշվի առնելով վերը թվարկված գործերի վերլուծությունները և միջազգային իրավական տեքստերը՝ մի կողմից, տեսնում ենք, որ Կոնվենցիայում և Հռչակագրում տեղ գտած նորմերի ձևակերպումները չեն ենթադրում տրանսսեռականների, միասեռականների ամուսնության, ինչպես նաև անձանց ամուսնալուծության իրավունքները: Պաշտպանվում է ամուսնության ավանդական հայեցակարգը, այն է՝ միայն տղամարդը և կինն ունեն ամուսնության և ընտանիք կազմելու իրավունք: Մյուս կողմից, մենք ունենք Դատարան, որն իրավասու է մեկնաբանելու Կոնվենցիայում տեղ գտած դրույթները և համապատասխանաբար արձանագրելու դրանց խախտումները: Խնդիրն այն է, որ Դատարանն իր որոշումներում հաճախ դուրս է գալիս Կոնվենցիայի հոդվածներում տեղ գտած ձևակերպումներից՝ դրանք լայն մեկնաբանելով կամ էլ, ընդհանրապես, այլ կերպ է մեկնաբանում այդ ձևակերպումները:

Այսպիսով, Դատարանն իր որոշումներում ամուսնության իրավունքին վերաբերող կոնվենցիոն նորմերը մեկնաբանելիս չպետք է դուրս գա ամուսնության ավանդական հայեցակարգի շրջանակից և այլ կերպ մեկնաբանի այդ իրավունքը, քանի որ իրավունքում գոյություն ունի մի մաքսիմ²⁰՝ «Exceptio est strictissimae interpretationis» (բացառությունը պետք է մեկնաբանել խիստ սահմանափակ), որի իմաստն այն է, որ եթե որևէ իրավունքի նորմից կամ սկզբունքից կան բացառություններ, ապա դրանք պետք է պարտադիր նախատեսված լինեն իրավունքի նորմի տեքստում: «Մեր պարագայում 12-րդ հոդվածը նշում է միայն տղամարդու և կնոջ ամուսնության իրավունքի մասին՝ չնախատեսելով այդ իրավունքից որևէ բացառություն տրանսսեռականների և միասեռականների ամուսնության տեսքով, որը կրկին վկայում է, որ Դատարանը պետք է հոդվածի տեքստը մեկնաբանի տառացիորեն՝ առանց խզելու ամուսնության և ընտանիք կազմելու իրավունքների միջև եղած կապը:

ОСОБЕННОСТИ ПРАВА ИНДИВИДА НА БРАК И СОЗДАНИЕ СЕМЬИ

ГИНОСЯН С. А.

Резюме

Правовые нормы, закрепленные в международно-правовых актах по урегулированию социально-семейных отношений, противоречат нормам национального законодательства ряда европейских стран, а Европейский суд по правам человека в своих решениях по-разному трактует положения Конвенции. Формируются ранее не существовавшие правовые отношения, допускаются однополые браки, а в некоторых консервативных католических странах возможность пользоваться этим правом получают и заключенные. Рассмотрение Европейской конвенции о защите прав человека и основных свобод, Всеобщей декларации прав человека, а также национальных

²⁰ Maxime՝ լատիներեն նշանակում է «հիմնականոն, խրատախոս»:

законодательств государств-членов конвенции приводит к заключению, что не следует выходить за рамки традиционной концепции брака и интерпретировать это гораздо шире.

PECULIARITIES OF THE RIGHT OF THE INDIVIDUAL TO MARRIAGE AND FORMATION OF FAMILY

S. GINOSYAN

Abstract

The legal norms enshrined in international legal acts on the regulation of social and family relations contradict the norms of the national legislation of a number of European countries, and the European Court of Human Rights in its decisions differently interprets the provisions of the Convention. Former non-existent legal relations are formed, same-sex marriages are allowed, and in some conservative Catholic countries, prisoners are also able to exercise this right. Consideration of the European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, the Universal Declaration of Human Rights, as well as the national legislations of the member states of the convention leads to the conclusion that one should not go beyond the traditional concept of marriage and interpret it much broader.